ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի հունվարի 11-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՃԴ-ԳՀԾՁԲ-2024/01**

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր Տրանշ 3, Մ1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման ավտոճանապարհի Լանջիկ-Գյումրի հատվածի մուտքերի կառուցման նպատակով Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) լրացման իրականացման» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՃԴ-ԳՀԾՁԲ-2024/01** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի հունվարի 10-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2024 թվականի հունվարի 10-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1՝ Հրավերի մաս I-ի հայտը ներկայացնելու կարգը կետի 4,3 ենթակետում նշված է, որ մասնակիցը ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով և մաս I–ի հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը կետի 8.2 ենթակետում նշված է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Սակայն որևէ տեղ նշված չէ թե ինչպես է որոշվում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման չափը, կամ կանխիկ փողի միջոցով ներկայացված հայտի ապահովումը գանձապետական որ հաշվին պետք է փոխանցվի և այլն: Հաշվի առնելով վերը շարադրյալը խնդրում ենք պարզաբանել հրավերում հայտի ապահովման պահանջ սահմանված է թե ոչ:

Պարզաբանում N 1՝ Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-ն որոշման 32-րդ կետի 9-րդ ենթակետի, եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում: Քանի որ ՃԴ-ԳՀԾՁԲ-2024/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, հրավերից հանվել է մաս I-ի 7-րդ բաժինը, մասնավորապես հայտի ապահովում ներկայացնելու պահանջը և հրավերի II մասի 2-րդ կետից համապատասխանաբար հանվել է 2.4 կետը:

Հարցադրում N 2՝ Հրավերի 4.2 և 5.1 հավելվածների վճարման պահանջագրերի 23ա. կետում առկա է վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության հատված, իսկ վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը հատվածում նշված է, որ վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում պարտադիր է վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը և ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը: 16.12.2016թ. ընդունված ՀՕ-21-

Ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումները ներկայացվում է ընտրված մասնակցի միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Հաշվի առնելով վերը շարադրյալը խնդրում ենք պարզաբանել թե ընտրված մասնակիցը որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու է միայն իր կողմից ստորագրված (կնքված) թե ոչ: Եթե ոչ, խնդրում ենք պարզաբանել, թե ինչպես պետք է տրամադրվի:

Պարզաբանում N 2՝ Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի, Պայմանագրի և որակավորման ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի միակողմանի հաստատած հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով /ՃԴ-ԳՀԾՁԲ-2024/01 ծածկագրով գնման ընթացակարգի դեպքում՝ ընտրված մասնակցի կողմից ներկայացվելու է պայմանագրի կնքման փուլում միակողմանի հաստատած հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով/:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՃԴ-ԳՀԾՁԲ-2024/01** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արմինե Շալունցին:

Հեռախոս՝ 010 54 21 76

Էլ. Փոստ՝ *procurement@armroad.am*

Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ